ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2022 թվականի №-Ա
քաղ. Երևան

ԱՐՄԻՆԵ ՌԱԴԻԿԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թվականի մարտի 24-ի №07/11.1/2154-2022 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում հայտնաբերվել է 890.0-902.5ՄՀց ռադիոհաճախականու-թյունների տիրույթում ճառագայթող բջջային կապի վերահաղորդակ, որը տեղակայված է Երևան քաղաքի Վահագնի թաղամասի 3-րդ տեղամասի Հրազդանի փողոցի №16 հասցեում (հողամասը սեփականության իրավունքով գրանցված է Արմինե Ռադիկի Աղաջանյանի անվամբ),

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Արմինե Ռադիկի Աղաջանյանին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի մարտի 29-ի №ՍԾ/34.2-Մ2-9/939-2022 գրությունը, որին ի պատասխան Արմինե Ռադիկի Աղաջանյանը հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աշխատակիցների այցից հետո անմիջապես դադարեցվել է վերահաղորդակի շահագործումը,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ և Արմինե Ռադիկի Աղաջանյանի գրությամբ փաստվել է վերջինիս կողմից առանց թույլտվության 890.0-902.5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի

մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Արմինե Ռադիկի Աղաջանյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 890.0-902.5ՄՀց ռադիոհաճախականություն-ների տիրույթի օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմինե Ռադիկի Աղաջանյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------2022թ.